ՀՀ Արագածոտնի մարզի «Եղնիկի հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ «Հասարակագիտություն» (3 դասաժամ) , «Ֆիզիկա » (6 դասաժամ) , «Բնություն » (3 դասաժամ), «Իմ հայրենիքը» (2 դասաժամ) և« Իմ հայրենիքը և աշխարհը» (2 դասաժամ) առարկաների թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
1.Դիմում (Ձև1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2.Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
3.Անձը հաստատող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
5.Ինքնակենսագրություն (Ձև 5),
6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում).
9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10.Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):
11.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող փաստաթուղթ:
12. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 22 –ից մինչև հոկտեմբերի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 7 -ին՝ ժամը 13:00-ին, Եղնիկի հիմնական դպրոցում. Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, գ.Եղնիկ 1-ին փողոց, շենք 12:
Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093-31-03-54: